ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ. Հովհաննես Թումանյան. Հայրենագիտական համանվագներ. *Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2005, 256 էջ:*

Թումանյանագիտությունը երբեք չի սպառվում: Ազգային մեծ բանաստեղծի մասին միշտ էլ կարելի է փնտրել ու գտնել արժեքավոր նյութեր, կատարել համապատասխան մեկնաբանություններ և այդ ամենը մատուցել յուրօրինակ ձևով, մանավանդ որ այսօրվա սերնդին անհրաժեշտ են ստեղծագործությունների գնահատման ժամանակակից չափանիշներ ու նոր մոտեցում:

Մեկ դար շարունակ Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրել ու գնահատել են մի քանի տասնյակ գրականագետներ: Այնպես որ, յուրաքանչյուր նոր ուսումնասիրություն դալիս է լրացնելու ոչ միայն եղածը, այլև նոր խոսք է ասում չսպառված թեմայի մասին: Դրա լավագույն վկայությունը ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Շախկյանի վերջերս հրատարակած գրախոսվող ուսումնասիրությունն է: Գրքի հեղինակին հաջողվել է բացահայտել Թումանյան բնապաշտ-հայրենագետի, ազգագրագետ-տոհմագետի, պատմագետ-հնագետի, ինչու չէ, նաև մարդաբանագետի մեծ աշխարհը:

Գ. Շախկյանը որոնող հեղինակ է: Նա դասական մոտեցում ունի բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության ամեն մի փաստի նկատմամբ: Դասական հեղինակին դասական, բայց ժամանակակից և նոր մոտեցում: Լայնակտավ այս աշխատանքն իր մեջ բովանդակել է Թումանյանի հարազատ աշխարհը, Լոռին, իր բնաշխարհով: Հեղինակը լինելով լոռեցի, քաջածանոթ հայրենի բնաշխարհի բոլոր հրաշալիքներին, հնագիտական պատմությանը, եկեղեցիներին, բերդերին՝ նվիրական սիրով է ներկայացրել այդ աշխարհի բնապատկերներն ու հնագիտական վայրերը:

Ներկայացվող մեծարժեք այս աշխատանքը վառ ապացույց է, որ ճարտարապետ-հեղինակի սերն ու նվիրվածությունը գրականությանը և, առհասարակ, գրականագիտական մտքին տիրապետելու նրա շնորհն ակնհայտ է: Թումանյանի անզուգական կերպարն այս ուսումնասիրության մեջ բացահայտվում է նոր կողմերով: Բանաստեղծ, արձակագիր, հասարակական ու քաղաքական, ազգային գործիչ, քննադատ ու մշակութային մեծ անհատականության կողքին համարժեքորեն երևում է նաև հայրենագետ և ազգագրագետ Թումանյանը: Նրա ողջ ստեղծագործությունը հայրենագիտություն է՝ սկսած գեղջուկի ընտանիքից մինչև ազգային խոշոր խնդիրներին նրա մասնակցությունը: Հովհ. Թումանյանը Լոռվա մեծ գիտակ էր ու բնության մեծ սիրահար, որի վկան իր ստեղծագործություններն են: Գ. Շախկյանին հաջողվել է նորովի թափանցել հանճարեղ և իմաստուն բանաստեղծի հոգեկան ապրումներով լի աշխարհը ու նրա հավերժական արժեքները անմահացնելու նոր ուղիներ գտել: Հովհ. Թումանյանը թողել է գրականության, լեզվի, բանահյուսության, և պատմամշակութային արժեք ունեցող բազում հանճարեղ ստեղծագործություններ, աֆորիզմներ, ասույթներ, մտքեր, որոնք դարձել են մշակույթի բացառիկ արժեքներ: Գ. Շախկյանը հայագետ Թումանյանին ներկայացնում է ազգային մտածողին վայել հետաքրքրությունների լայն շրջանակներում, ուր նա հայտնի է որպես արվեստագետ, մշակույթի նվիրյալ:

Հովհ. Թումանյանի ցանկացած ստեղծագործություն, գեղարվեստական բարձր արժանիքներից բացի, հագեցած է հայրենագիտությամբ և մարդաբանությամբ: Բանաստեղծի ազգային ավանդույթների բացահայտումը և պահպանումը մարդկային կյանքի փիլիսոփայության ու հոգեբանության, աշխարհը ճանաչելու բացառիկ օրինակ է: Ինչպես բոլոր թումանյանագետները, Գ. Շախկյանը ևս իր մեծ հայրենակցին գնահատում է ժողովրդի հոգու աչքերով: Իսկ ժողովուրդը կատարյալի գնահատման չափանիշն է: Բանաստեղծի ժողովրդայնության մասին ամենաբարձր կարծիքը եղիշե Զարենցինն է: Ոչ ոք Թումանյանի ստեղծագործության համամարդկային և տիեզերական ընդգրկումներն ու պատվավոր տեղը համաշխարհային պոեզիայի համապատկերի մեջ չի գնահատել այնպես, ինչպես Զարենցը: «Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»,– ասել է հանճարեղ Զարենցը: Թումանյանի հանճարեղության չարենցյան այս գնահատականը հիմնված է բանաստեղծի հայրենագիտական ներդրումների վրա: Ինչպես նշում է գրքի հեղինակը, հայրենագիտական հարուստ դրսևորումներով են հագեցած Թումանյանի վաղ շրջանի գործերը: Անշուշտ, դրանք բանաստեղծի մանկական և պատանեկան տարիների վառ տպավորություններն են, որոնք դրոշմվել են հայրենի բնաշխարհից: Հիշենք նրա խոսքը. «Պատանի ժամանակ սիրում էի մեր հանգերում ու բլուրների վրա, ծառերի տակ մեջքիս վրա պառկել ու ժամերով խորասուզվել երկնքի մեջ կամ բնության» (էջ 19):

Գրքի հեղինակն անդրադարձել է Թումանյանի պատմագիտական հոդվածներին, ճանապարհորդական նոթերին, հրապարակային ելույթներին, նամակներին, որոնք համակված են ազգային քաղաքակրթության և մշակութային պատմության զարգացման մտահոդությամբ:

Հովհ. Թումանյանի ստեղծագործական ժառանգության մեջ ճարտարապետության և ազգային հնագիտական մշակույթի հարցերը ընդգրկուն տեղ են զբաղեցնում: Այդ հարցերը ճարտարապետ գիտնականի ուշադրությունից չեն վրիպում: Նա ըստ արժանվույն է գնահատում ու արժևորում բանաստեղծի ազգանվեր մտահոգությունը: Գրողի ստեղծագործություններում տեղ գտած ճարտարապետության և հոգևորմշակութային հարցերին անդրադառնում է խիստ մասնագիտական չափանիշներով: Իրոք, Թումանյանն արգասաբեր գործ է կատարել հայոց վանքերի և լուսավորության կենտրոն համարվող եկեղեցիների գնահատման գործում, իսկ շատ դեպքերում էլ մտահոգվել դրանց անխնամ ու անմխիթար վիճակով: Ինչպես Ավ. Իսահակյանը, այնպես էլ Հովհ. Թումանյանը հուզմունքով ու հիացմունքով են դիտել Անիի ավերակները, Անին՝ իր հիասքանչ ճարտարապետությամբ: Մեծ բանաստեղծը հմայված էր Անիով: «Լուռ, մտասույզ թափառում էր՝ անցյալի հետ ներքին խոսակցությամբ տարված. կանգնում էր հրաշակերտ շենքերի առաջ, հայացքը լարած նայում էր սյուներին, կամարներին, քանդակներին, ապա աչքերը գոցում և ականջները լարում, կարծես մի երաժշտություն էր լսում, ո՛չ սովորական, ո՛չ այս աշխարհից»,– վկայում էր Ավ. Իսահակյանը: Այնուհետև Վարպետը շարունակում է. «Երբ պարիսպներից դուրս էինք գալիս, արդեն Օհաննեսը վերջին անդամ նայեց Անիին և ասաց. «Ինչքան մարդ պիտի անբան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա: Մի՞թե այս գեղեցկությունը պիտի մեռնի՝ առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա» (էջ 71):

Վերլուծելով արվեստի հարցերին նվիրված բանաստեղծի մի շարք հոդվածներ՝ դրամատուրգիայի, թատրոնի, երաժշտության, ճարտարապետության և մշակույթի այլ ճյուղերի մասին, Գ. Շախկյանը դրանք համարում է հայ արվեստի պատմության և տեսության համար ուսումնասիրման կարևոր աղբյուր: Լոռու Դսեղ գյուղը

հայտնի է պատմական ու մշակութային արժեք ունեցող հուշարձաններով, բարձրաքանդակներով, ընդարձակ գավիթներով, որոնցով ժամանակին հիացել է գրողը: Գրքի ուշագրավ բաժիններից մեկը նվիրված է Դսեղի տարածքում գտնվող Մամիկոնյանների Բարձրաքաշ Ս. Գրիգորի տաճարին, դրա ընդարձակ գավթին, քանդակներին, արձանագրություններին, որոնցով ժամանակին հիացել է Թումանյանը և գրել. «...երբ մոտենում ես, թնդում է սիրտդ, աչքերդ մթնում և մի վառ սրբազան սեր բորբոքում է հոգիդ» (էջ 119): «Մամիկոնյանների հրաշքը՝ Բարձրաքաշ Ս. Գրիգորի վանքը, բազմաբնույթ կառույցների մի ամբողջ համակարգ է, ուր ամեն մի քար ու նշան, ամեն մի գերեզման այցելուների վրա թողնում է դառը ժամանակների զարմանահրաշ պատմությունների գրվագներ: Այս վանքի մասին Թումանյանը գրում է. «Հարավային մասից մտնում են միջին մասը, միջինից երրորդը, մի շինություն, որ երևի հերթակալ միաբանի համար է հատկացված, և պարզ տեսնում ես, որ այդ մասերը շինված են զանազան ժամանակներում, զանազան ձեռքերով: Այս հանգամանքը հիմք ու տեղիք է տվել մի ավանդության, որ պատմվում է Սուրամի բերդի մասին, թեև մի փոքր տարբեր» (էջ 232):

Թումանյանի ժամանակներում հրաշագեղ այդ կառույցներն արդեն ավերակների էին վերածվել: Դրանց վերաբերյալ բանաստեղծի արտահայտած մտքերի ու մտորումների մասին Գ. Շախկյանը սպառիչ վերլուծություններ է կատարում ելնելով ճարտարապետի խորաթափանց մտքերից:

Գրողի նուրբ ու հոգեցունց աշխարհը թափանցելու գործում Գ. Շախկյանը կատարում է ոչ միայն ճարտարապետական, հնագիտական համակարգված հետազոտություն, այլև ցուցաբերում գրականագիտական և լեզվագիտական բանիմացություն:

Գրքի ամենաուշագրավ բաժիններից է «Թումանյանը և Հայոց ճարտարապետության հիշատակարանների լեզվի առաջին ուսուցիչը»: Այստեղ քննվում են Թումանյան և Թորոս Թորամանյան առնչություններն ու գիտական գործունեության մի շարք հարցեր: Միանգամայն տեղին Գ. Շախկյանը նկատել է, որ Թումանյանի ժառանգության ամենամեծ արժեքը նրա արդիականությունն է: Քաղաքական ու ազգային թեմայով գրած նրա հոդվածները, կոչերն ու ճառերը, հրապարակախոսական ելույթները կարծեք թե հենց մեր օրերի համար են ասված կամ գրված: «Պետք է լռեն վերջապես բոլոր նրանք, որոնք խոսել են ու խոսում են և՛ ժողովրդի անունից, և՛ գրականության, և՛ պատմության, և՛ գիտության, միմիայն մարգկանց աչքերին թոզ փչելու համար, կուրացնելու ու իրենց ետևից տանելու համար, իրենց համար առաջնորդողի դիրք ու աթոռ ստեղծելու համար, և հանդես պետք է գան ու խոսեն նրանք, որոնք երկար տքնությամբ ու ճկունությամբ ուսումնասիրել ու սիրել են իրենց խոսքի առարկան և չեն գալիս դիրք ու աթոռ գրավելու հավակնությամբ, այլ գիտությանն ու գեղարվեստին ծառայելու պատրաստակամությամբ: Ահա նրանցից մեկը՝ ճարտարապետ Թորոս Թորամանյանը» (էջ 137):

Գրքի հեղինակը, գնահատելով հայ ճարտարապետության բնագավառում Թումանյանի կատարած նվիրական գործունեությունը, անդրադառնում է նաև այդ բնագավառի նրա հրապարակումներին, ուր բանաստեղծը կարևորել է հայ ճարտարապետների ազգանվեր գործունեությունը: Ուշագրավ են հայ ճարտարապետության վերաբերյալ Թումանյանի արտահայտած նկատառումները: Այսպես, գնահատելով բանաստեղծի մեծ վաստակը՝ նշում է, որ ճարտարապետը Եվրոպային ու ամբողջ աշխարհին ցույց տվեց, որ գոյություն է ունեցել հայկական ինքնուրույն ճարտարապետություն, որն ազդել է թե՛ հարևան և թե՛ հեռավոր ազգերի ճարտարապետությունների վրա: Նա նշում է, որ «անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ա-

մեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար» (էջ 143): Թումանյանը գտնում է, որ գեղեցիկ արվեստների մեջ «առանձին կարևորություն է ունեցել միշտ ճարտարապետությունը», որին Հեգելը «քարացած երաժշտություն» է անվանում. «մի անգամ ընդմիշտ քարացած, կանգնած, որ չի աղավաղվում ժամանակի հետ և որին վերապահված է առանձին կարևոր գեր»: Թումանյանի կարծիքով Թորամանյանի ներդրումը հայտնություն է ինչպես օտարների, այնպես էլ հայ հասարակության համար: Նրա գործը համահունչ էր մեծ բանաստեղծի պատկերացումներին ու գաղափարներին: «Թումանյանը հեռատեսորեն գտնում էր, որ Թորամանյանի ժառանգության խորամիտ ուսումնասիրությունը և ներդրումը ճարտարապետական գիտության և ճարտարապետական կադրերի պատրաստման գործում ազգային կարևորության խնդիր է, որ պայմանավորում է խորազնին քննություն բոլոր տեսանկյուններից, համակողմանի և անաչառ մոտեցում դնահատելով գիտնականի ստեղծագործական, նորարարական կողմը, քննական-վերլուծական ոգին, փաստական, տեսական հիմնավորվածությունը, հատկանիշներ, որոնցով բնութագրվում է Թորամանյանի վիթխարի ժառանգությունը»,– գրում է Գ. Շախկյանը (էջ 145–146): Թումանյանը, գնահատելով Թորամանյանի վաստակը, նշում է, որ նա իր արժանի տեղն ունի Նարեկացու, Սայաթ-Նովայի և մեր մյուս մեծերի շարքում: Թումանյանը եղել է Թորոս Թորամանյանի բարոյական ու նյութական աջակիցը:

Գրքի «Լույս տալով եմ ըսպառվել» փոքրածավալ բաժնում Գ. Շախկյանն անդրադառնում է գրողի հանճարեղությանը, որը նրա ստեղծագործական օժտվածության, ընդունակությունների բարձրագույն աստիճանն է: Թումանյանին բնորոշ են ստեղծագործությունների բացառիկ նորարարությունը, ինքնատիպությունը: Նա օժտված էր աստվածային ներշնչանքով, տիեզերական ընդգրկումով, դասական հանճարեղությամբ: Հեղինակն ասվածը հաստատելու համար բերում է գրականագետներ Մ. Մկրյանի, Հ. Թամրազյանի գնահատականները բանաստեղծի հանճարի վերաբերյալ:

Թումանյանի հայրենագիտական ընդգրկումների մեջ Գ. Շախկյանը կարևորում է Թումանյանական տոհմաբանության խնդիրները, որին առաջինն անդրադարձել է ինքը՝ Հովհ. Թումանյանը: Այս խնդրի ամենամեծ ներդրողն է եղել վաստակաշատ Թումանյանագետ Ա. Ինճիկյանը՝ առաջին անգամ տալով հարցի բազմակողմանի և խոր պատմագիտական վերլուծություն*: Գրքի վերջում հեղինակը ներկայացնում է Թումանյանի տոհմածառը, որը գիտնականի տքնաջան, մանրակրկիտ և ազնիվ նվիրումի հաստատումն է: Նա քննության է առնում բանաստեղծի պապի՝ Հովհաննես աղայի երեք զավակների՝ Թադևոսի, Մեհրաբի և Գրիչկայի տոհմաճյուղերը:

Գրողի ժառանգության ուսումնասիրությունը և արժևորումն անընդհատ շարունակվող ու զարգացող գործընթաց է, որովհետև, ինչպես գրել է Բելինսկին Պուշկինի մասին, «նա պատկանում է հավիտյան ապրող և շարժվող երևույթների թվին, որոնք կանգ չեն առնում այն կետում, որտեղ վրա է հասել մահը, այլ շարունակում են զարգանալ հասարակության գիտակցության մեջ» (էջ 164):

Բանաստեղծի բազմաթիվ կապերն արտացոլող և ընտանեկան բազմաթիվ լուսանկարները, որոնք զետեղված են ներկայացվող գրքում, հնարավորություն են տալիս ընթերցողին հաղորդակցվելու իմաստնացած կյանքի դրվագներին: Լուսանկարներից շատերը տպագրվում են առաջին անդամ: Դսեղի բնապատկերներն ու Լոռվա բնաշխարհի բացառիկ այդ պատկերները

* Ա. Ինճիկյան. Հովհաննես Թումանյան. Կյանքի և ստեղծագործության պատմությունը. Երևան, 1969:

ստեղծում են հանճարին մտքի թռիչք տվող վկայություններ:

Թումանյանը գրականության և արվեստի համար անեղր հանրագիտարան է: Կարծում ենք արդեն ժամանակն է, որ Թումանյանագիտությունն անդրադառնա բանաստեղծի քաղաքական գործունեությանը, դրամատուրգիայի, թատրոնի, երաժշտական արվեստի ու կերպարվեստի հետ նրա առնչություններին, քանի որ նշված բնագավառները խոպան են հայ մշակույթի պատմության մեջ:

Համոզված ենք, որ հարուստ փաստերով և ծավալուն շարադրանքով պատկերազարդ այս գիրքը կհարստացնի Թումանյանագիտության պատմությունը:

ՌՈԲԵՐՏ ԴԱՎԹՅԱՆ